



30(532)
13.11.2018
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՊԵՏԵ Ե ԼԻՆԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԵՒԱՅԻ ՆԵՐՈՒԺԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ



ԱՅ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության հետ համատեղ նոյեմբերի 1-ին «Վալեբա Գարդեն» հյուրանոցային համալիրում անցկացրեց ընդլայնված խորհրդակցություն՝ նվիրված Արցախում ներառական կրթության ներդրման հիմնախնդիրներին: Մասնակցում էին ԱՅ առողջապահության նախարար Արայիկ Բաղդյանը, աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարար Սամվել Ավանեսյանը, Մարդու իրավունքների պաշտպան Արտակ Բեգլարյանը, Աժ պատգամավորներ, շահագրգիռ կառույցների ղեկավարներ և աշխատողներ: Երևանից ժամանել էին «Հուլիսի կամուրջ» ՀՀ նախագահ Սուսաննա Թադևոսյանը, կրթության հարցերով փորձագետ Անահիտ Բախչիյանը:

Ներկայացրին ողջունեց ԱՅ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը՝ տեղեկացնելով, որ նախարարությունը ներառական կրթության խնդիրների շուրջ տարբեր ձևաչափերով քննարկումներ է ծավալել շահագրգիռ կազմակերպությունների, գործընկեր կառույցների հետ և առաջին անգամ է նման ներկայացուցչական կազմով խորհրդակցություն հրավիրել: Նպատակն է հստակեցնել հայեցակարգը և դրանից բխող պետական քաղաքականությունը ոլորտում:



Ներառական կրթությունն Արցախի հանրակրթական դպրոցներում իրականացվում է 2010 թվականից և, համաձայն «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի պահանջների, մինչև 2025թ. պետք է անցում կատարվի համընդհանուր ներառական կրթության՝ որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: «Կա հաստատված պլան-ժամանակացույց, որի համաձայն իրականացվում է ներառական կրթության համակարգի ներդրման գործընթացը, սակայն մեր դիտարկումներով համընդհանուր ներառական համակարգի ներդրմանը խոչընդոտում են մի շարք խնդիրներ և առաջին հերթին՝ այս համակարգի և ընդհանրապես ներառականության ոչ ճիշտ ընկալումը հանրության շրջանում ու դրանից բխող տարբեր

վորեցին դրանց վրա: Նա նշեց ներառականության կարևորությունը նաև միջազգային արտաքին քաղաքականության տեսանկյունից: Նույնիսկ շատ բարձր փաստաթղթերում ընդգծվում է ներառական հասարակության անհրաժեշտությունը: Եվ դա սկսվում է կրթությունից:

Արցախում ներառական կրթության գործընթացն իրականացնում է ԿԳՍՍ գնահատման և թեստավորման կենտրոնը՝ մանկավարժահոգեբանական աջակցության բաժնի միջոցով: Բաժնի պետ Հասանիկ Եսայանը ներկայացրեց ներառական կրթության գործընթացն Արցախում: Մեր հանրապետությունում ներառական կրթությունը նկենարկել է 2010-ից. սկզբում՝ 7 դպրոցում և 4 շրջանների վարչակազմերի աշխատակազմերին կից ստեղծվելով բազմամասնագիտական խմբեր, որոնց նպատակը երեխաների ինտեգրումն էր հասարակությանը, քանզի շատ երեխա-

պատճառներով: Այս ուստարում հանրապետությունում կա 467 ԿԱՊԿՈՒ Երեխա, որից 63-ը ստանում է տնային ուսուցում: Բանախոսն ասաց, որ մի շարք երեխաներ, ունենալով թեթև ու միջին աստիճանի խանգարում, հայտնվել են տնային ուսուցման երեխաների շարքում, այսինքն՝ խախտվել է երեխաների իրավունքը: Առաջին տարում ավելի շատ էին տնային ուսուցում ստացող երեխաները: Բժիշկների կողմից սխալ է արվում, երբ իրենք են որոշում երեխայի կրթության ձևը: Բժիշկը միայն պետք է ախտորոշի, իսկ մանկավարժահոգեբանական աջակցության մասին որոշելու իր կրթության ձևը: Մյուս կողմից էլ կան խորը և ծանր խանգարումներով երեխաներ, որոնք չեն կարողանում ներառվել՝ համապատասխան պայմաններ դպրոցում և դրսում չլինելու պատճառով: Բանախոսը բարձրացրեց մի շարք հարցեր, որոնք քաղաքաշինության, սոցապ, առողջապահության նախարարությունների հետ մեկտեղ պետք է լուծվեն: Դրանցից են. զուտ կրթական ոլորտի մասով՝ ուսուցիչների և մասնագետների պատրաստում և վերապատրաստում, մանկավարժահոգեբանական աջակցության խմբերի ստեղծում դպրոցներում, գոնե՝ 100-ից ավելի աշակերտ ունեցող կրթօջախներում, որոնց թիվն այնքան էլ մեծ չէ՝ 39, մանկավարժահոգեբանական հանրապետական կենտրոնի ստեղծում, ուսուցչի օգնականի հաստիքի ներդրում:

Առողջապահական ոլորտի համար առանձնացրեց խնդիրների վաղ հայտնաբերումը, վերականգնողական աջակցությունը՝ ըստ ֆունկցիաների խանգարման աստիճանների: Աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման ոլորտի մասով՝ սոցիալական մանկավարժների և սոցիալական աշխատողների համագործակցություն, սոցիալական աշխատողի ինստիտուտի, ցերեկային կենտրոնների ստեղծում, երկարօրյա կրթության կազմակերպում: Վերաբնակեցվող բնակավայրերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը նորմայից բարձր է, դրա համար պետք է մշակել ինչ-որ մոտեցում այս կարգի բնակավայրերում, որտեղ կան սոցիալական խնդիրներով ընտանիքներ, և որտեղ ճնշվածությունը բարձր է, ստեղծել երեխաների ցերեկային աջակցման կենտրոններ: Ունենք միայն «Շող» կենտրոնը Ասկերանում և Շուշիում, որտեղ քիչ թվով երեխաներ կան:

ներ կրթությունից դուրս էին, ստանում էին տնային ուսուցում, որն այնքան էլ որակյալ չէր: 2013թ. ԳԹԿ-ում բացվել է կրթական կարիքների գնահատման բաժինը, որը հետո անվանափոխվեց մանկավարժահոգեբանական աջակցության բաժնի: Հենց սկզբից էլ բաժնի գործառնությունները ծավալվեցին կենտրոնի չափ էր, 2017-ին այն կրկնակի դարձավ, բայց ցավոք, կազմը և հնարավորությունները մնացին անփոփոխ: Փաստորեն բաժինն իր ուժերից վեր աշխատանք է տանում (ֆիզիկապես անհնար է հասցնել): 2014-ին 100-ից ավելի դպրոցներում կային կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներ: Ներկայումս հանրապետությունում առկա են 17 բազմամասնագիտական խմբեր, որոնցից 13-ն աշխատում է դպրոցներում: ԿԱՊԿՈՒ երեխաների միայն կեսն է ստանում դպրոցներում մանկավարժահոգեբանական աջակցություն, մնացածները պետք է ապահովվեն շրջիկ բազմամասնագիտական խմբերով: Ցավոք, շրջաններում այդ խմբերը չեն կարողանում լիարժեք աշխատել երեխաների հետ մի շարք

ներ կրթությունից դուրս էին, ստանում էին տնային ուսուցում, որն այնքան էլ որակյալ չէր: 2013թ. ԳԹԿ-ում բացվել է կրթական կարիքների գնահատման բաժինը, որը հետո անվանափոխվեց մանկավարժահոգեբանական աջակցության բաժնի: Հենց սկզբից էլ բաժնի գործառնությունները ծավալվեցին կենտրոնի չափ էր, 2017-ին այն կրկնակի դարձավ, բայց ցավոք, կազմը և հնարավորությունները մնացին անփոփոխ: Փաստորեն բաժինն իր ուժերից վեր աշխատանք է տանում (ֆիզիկապես անհնար է հասցնել): 2014-ին 100-ից ավելի դպրոցներում կային կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներ: Ներկայումս հանրապետությունում առկա են 17 բազմամասնագիտական խմբեր, որոնցից 13-ն աշխատում է դպրոցներում: ԿԱՊԿՈՒ երեխաների միայն կեսն է ստանում դպրոցներում մանկավարժահոգեբանական աջակցություն, մնացածները պետք է ապահովվեն շրջիկ բազմամասնագիտական խմբերով: Ցավոք, շրջաններում այդ խմբերը չեն կարողանում լիարժեք աշխատել երեխաների հետ մի շարք

«Հայաստան» համահայկական հիմնադրամ ԲԶԶՂՁԻ ԹՅՍ ԹՅՍՍԻ Ծ ԹՕԾԱՅԻ ԶՍԻ ԹԱՍԱՅԵԱ

Ուղտասարում դպրոց գործում է 2003 թվականից: Այն հարմարեցված էր տնակներում, հնարավորության սահմաններում ստեղծվել էին պայմաններ՝ վերաբնակվեցվող գյուղում երեխաների ուսումնադաստիարակչական գործն իրականացնելու համար:



«Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրեն Հայկակ Արշամյանի գլխավորած պատվիրակությունը կրկին Արցախում էր, և առիթը նորից ու նորից արցախցիներին գոտեպնդելն ու ոգևորելն էր: Հետպատերազմյան Արցախում բազմաթիվ հիմնախնդիրներ լուծվեցին հենց «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով: Եվ ինչպես Ազատամարտի տարիներին հայ ազգի պարծանք Ավոն է ասել. «Ես այսօր այստեղ եմ, որովհետև իրավունք չունեն ուրիշ տեղ լինելու. Արցախը կորոշի հայության ճակատագիրը», հիմա մեծ ազգասերի ու ազգի նվիրյալի խոսքը որպես պատգամ է հնչում աշխարհասփյուռ հայերի համար, որոնց ճիգերն ու ջանքերն ի մի են բերվում և ի նպաստ հայրենիքի շենացման օգտագործվում «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով:

Կանադայի Տորոնտո քաղաքի «Հայաստան» համահայկական հիմնադրամի պատասխանատու Սկրտիչ Սկրտիչյանի ջանքերով Արցախում մի շարք բարեգործական ծրագրեր են կյանքի կոչվել: 26 տարի շարունակ նա արցախցիների կողքին է, կիսել է նրանց հոգսերն ու բազում երջանիկ պահեր պարզել նրանց: Հեթական ծրագրի շրջանակներում Տորոնտոյի «Հայաստան» հիմնադրամի և Արցախի Հանրապետության կառավարության համաֆինանսավորմամբ Ասկերանի շրջանի Ուղտասար համայնքում կառուցված դպրոցական շենքը կրում է Արցախի և Հայաստանի ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի անունը:

Հանդիսավոր բացմանը ներկա էին ԱՅ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, քաղաքաշինության նախարար Կարեն Շահրամանյանը, Սկրտիչ Սկրտիչյանը տիկնոջ հետ, Ասկերանի շրջվարչակազմի ղեկավար Գեղամ Բեգլարյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Հայաստանի և Արցախի պատասխանատուներ, ուղտասարցիներ:

Հնչեց ԱՅ պետական օրհներգը, և ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին հանուն հայրենիքի ազատության իրենց կյանքը զոհաբերած քաջորդիների հիշատակը:

Օրն իսկապես տոնական էր իր բովանդակությամբ, իսկ նորակառույց դպրոցի ճակատին դաշված Ավոյի «Եթե կորցնենք Արցախը, մենք կշրջենք Հայոց պատմության վերջին էջը» խոսքը բոլորիս ևս մեկ անգամ խորհելու առիթ է տալիս:

Ուղտասարի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Վլադիմիր Հակոբջանյանը երախտագիտության իր խոսքում նշեց, որ ուրախ և հպարտ են, որ Արցախի և Սփյուռքի բարեկամության արդյունքում ունեն հարմարավետ ու գեղեցիկ կրթօջախ:

ԸՆԹԱՅ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ՝ ՆԿԻՐՎԱԾ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ



2001թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն նույնների 10-ը պաշտոնապես ճանաչել է Գիտության համաշխարհային օր: Այդ առթիվ Արցախի երիտասարդ գիտնականների ու մասնագետների միությունը (ԱԵԳՄՍ) կազմակերպել է «Գիտության ներկան և ապագան» խորագրով կլոր սեղան: Հրավիրված էին գիտական մարմինների և գիտության ներկայացուցիչներ, պատգամավորներ, ուսանողներ:

Անուշ Դոլուխանյանը: Կարևորելով ինտելեկտուալ ներուժի առաջնությունը յուրաքանչյուր երկրի զարգացման գործում՝ նա նշեց, որ Արցախում պետք է մոբիլիզացվի այն: Գիտությունը երիտասարդներին չի հրապուրում: Թերևս այսպիսի եզրակացություններ ենք պարբերաբար լսում, միևնույն ժամանակ առաջ է քաշվում այն գաղափարը, թե հայկական իրականության, մասնավորապես Արցախի բռնեղ զենտիկ ինտելեկտուալ պատկանելությունն է, և այլևս պահանջ է այն ընդգրկել Արցախի միջազգային ճանաչման գործիքակազմում: Կազմակերպության կողմից հարցում է անցկացվել գիտությանը զբաղվող երիտասարդների շրջանում: Հարցման արդյունքներից առանձնացնենք ուշագրավ մի շարք կետեր. գիտությանը զբաղվող երիտասարդների գերակշիռ մասին գիտության բնագավառ է բերել ու այնտեղ պահում է մասնագիտական աշխատանք կա-

տարելու հետաքրքրությունը, որոնց մոտիվացիան մասնագիտական աճի հնրավորությունն է, ինչպես նաև այն, որ գիտությանը զբաղվելու սոցիալական պատճառը սեփական գիտելիքներն ու փորձն ապագա սերնդին փոխանցելու և հասարակությանն օգուտ բերելու, ինքնազարգացման և ինքնաիրացման ցանկությունն է, գիտական մթնո-

նում: Բուհերում գիտության վիճակի վերաբերյալ կարծիք է հայտնվել, որ գիտությունն այնտեղ վաղուց է նահանջել: Այդքանով հանդերձ՝ հարցվածների մի զգալի մասը դեմ է արտերկիր տեղափոխվելուն, չնայած մի մասն էլ այն կարծիքին է, որ դա մասնագիտական աճի հնարավորություն է: Պետք է և՛ կրթության, և՛ գիտության համար

դրսևորման պայմաններում՝ համապատասխան մեխանիզմների մշակմամբ և ներդրմամբ:

Կլոր սեղանի մասնակիցների քննարկմանը ներկայացված օրակարգային հարցերը բխում էին նույն այդ խնդիրներից՝ Արցախում գիտահետազոտական կենտրոնի (ուղեղային կենտրոն) ստեղծման անհրաժեշտություն, երիտասարդ գիտնականների գիտական գործունեության, երիտասարդական գիտական միջոցառումների ֆինանսավորման, սարքերի (մյուսերի) ձեռքբերման, երիտասարդ գիտնականների աշխատանքների հրատարակման նպատակով գիտական հիմնադրամի ստեղծում, գիտահետազոտական դրամաշնորհների համար հատկացվող միջոցների ավելացում, արտասահմանյան առաջատար գիտական հանդեսներում տպագրվող գիտական հոդվածների խթանում ու խրախուսում, միջազգային համագործակցության ակտիվացում, միջազգային գիտական միջոցառումներին արցախցի մասնագետների մասնակցության ապահովում:



լորում աշխատելու հնարավորությունը: Բացասաբար անդրադարձող գործոնների ցանկում նշվել են գիտության նկատմամբ ոչ պատշաճ պետական հոգածությունը, ֆինանսական աղքատության և գիտահետազոտական փորձարարական հիմնարկների բացակայությունը: Իրավիճակը շտկելու համար առաջարկվում է գիտական գործունեությունը խթանող համակարգի ներդրում, այն է՝ գիտական հիմնադրամների, ֆոնդերի ստեղծում, համահայկական մրցույթների կազմակերպում, պետական մրցանակների սահմա-

զուգահեռաբար հավասար հնարավորություններ ստեղծվեն, գիտության և գիտնականի կերպարի հեղինակության բարձրացման համար հաճախակի կազմակերպվեն գիտաժողովներ, ֆորումներ և այլ հավաքներ: Եզրակացությունն այն է, որ Արցախում գիտությանը զբաղվող երիտասարդների հիմնախնդրային դաշտը պայմանավորված է գործունեությամբ, որոնք որպես կանոն՝ պետական քաղաքականության հետևանք են: Այն ժամանակի ընթացքում կարող է իրականություն դառնալ քաղաքական կամքի

Կլոր սեղանի մասնակիցների տեսակետները համահունչ էին հարցվածների կարծիքներին:

Որոշվեց դրանք ամփոփել և ներկայացնել ԱՀ կառավարության և Ազգային ժողովի քննարկմանը, ինչպես նաև մշակել և ներկայացնել երիտասարդ գիտնականների աջակցման ծրագրի նախագիծ, ձեռնամուխ լինել գիտության զարգացման հայեցակարգի մշակման աշխատանքներին:

Սեֆ. լրատվություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՐԵՒԱՅԻ ՆԵՐՈՒԺԻ ԲԱՑԱՐԱՅՏՈՒՄԸ

Քաղաքաշինության ոլորտ. շենքերը կառուցելիս հաշվի առնել տեսողության և հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց կարիքը, աստիճանաբար հարմարեցնել արդեն կառուցված դպրոցները, չկառուցել ձևական թեքահարթակներ:

Գլխավոր բանախոս՝ «Հուլիսի կամուրջ» ՀԿ նախագահ Սուսաննա Թադևոսյանը ներկայացրեց ներառական կրթության համակարգի ներդրման իրավական հիմքերը: Ելույթի առաջին մասը նվիրված էր հաշմանդամությանը, երկրորդ մասը՝ ներառական կրթության օրենսդրությանը:

Նրա պարզաբանմամբ՝ հաշմանդամության մոդելները երեքն են՝ բարեգործական, բժշկական, սոցիալական:

Բարեգործականը գալիս է վաղ ժամանակներից (մեր եկեղեցիներին կից գործել են անկեղևնոցներ կամ այլ անվանումներով հաստատություններ, որտեղ կարիքավորներն օգնություն էին ստանում): Բարեգործության ընկալումն այսօր էլ ամուր է նստած մարդկանց մեջ:

Բժշկական մոդելով հաշմանդամությունն անձի խնդիր է, «հիվանդություն», որի պատճառով նրա կենսագործունեությունը խաթարվում է: Չանքերն ուղղվում են անձի վիճակի բարելավմանը, մարդը զրկվում է իր համար որոշումներ ընդունելու և իր սեփական ընտրությունը կատարելու հնարավորությունից, դառնում է «հիվանդ», «խնամյալ»: Հասարակությունը սահմանափակում է նրա կրթության, աշխատանքի և այլ հնարավորությունները, քանի որ նա հիվանդ է և հիմնականում ունի բուժման, խնամքի, հոգածության կարիք: Մարդու կյանքը կախված է ուրիշների կարծիքից, եզրակացություններից, որն էլ հանգեցնում է նրա սոցիալական մեկուսացմանը, խոչընդոտում նրա լիարժեք մասնակցությանը հասարակական կյանքին:

Ընդունելի սոցիալական մոդելն է, որը

հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ-մշակութային արժեքների հետևանք: Այս մոտեցումը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա: Հաշմանդամության սոցիալական մոդելը կենտրոնանում է արգելքների ու խոչընդոտների վերացման վրա և վստահում է հաշմանդամություն ունեցող մարդու՝ որպես երկրի լիարժեք քաղաքացու կարողություններին ու ներուժին:

Սոցիալական մոտեցման դեպքում վերացվում են ներքին և արտաքին բոլոր խոչընդոտները, որոնք խանգարում են հասարակության կյանքին նրանց ներառմանը: Սոցիալական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը սահմանվում է որպես անձի կայուն առողջական խնդիրների խանգարման հետևանքով ձեռք բերած ֆունկցիոնալ սահմանափակումների և միջավայրային ու վերաբերմունքի արգելքների (խոչընդոտների) փոխազդեցության հետևանք: Սոցիալական մոդելի վրա հիմնված մոտեցումը ներառական կրթության առանցքն է: Նրա բաղկացուցիչ մասերն են՝ բոլոր երեխաների կրթական կարիքների հավասար գնահատում, երեխաների միջև տարբերությունները ոչ թե որպես դժվար հարցա-հարվող, այլ կրթական գործընթացին նպաստող հանգամանքների ընդունում, դպրոցի գործընթացներին բոլորի հավասար մասնակցություն, քաղաքականության վերանայում և համապատասխանեցում բոլոր երեխաների կարիքներին, ուսումնական գործընթացի խոչընդոտների վերացում, բոլոր աշակերտների ներգրավում:

Ներառումը մտածելակերպ է, սկսվում և կայանում է նախ մեր մտածողության, համոզմունքների և արժեքների ու նոր միայն՝ քաղաքականության մեջ և պրակտիկայում:

Կրթության առանձնահատուկ պայմաններին կարիքը նշանակում է՝ առարկայական

ծրագրերի հարմարեցում, սոցիալական և այլ ծառայությունների, մանկավարժական ծառայությունների տրամադրում, ուսուցման տարբեր մեթոդների կիրառում, անհատական տեխնիկական միջոցների տրամադրում, հարմարեցված միջավայրի ապահովում:

Սոցիալական մոդելը հավատում է, որ յուրաքանչյուր մարդ կարող է, ի վիճակի է, եթե վերացվեն սոցիալ-մշակութային և վերաբերմունքային (որն անենակարևոր է) արգելքները: Հաշմանդամությունը մարդունը չէ, մարդուց դուրս է:

Քննարկման ընթացքում հասունացվեց այն գաղափարը, որ ներառականությունը գլոբալ հասկացություն է, վերաբերում է բոլորին: Մեկուսանալ ոչ մեկ չենք ուզում, առավել ևս՝ պետությունները: Մեր Արցախի Հանրապետության պայքարի նպատակն է աշխարհի պետությունների շարքում իրավահավասար լինել, մեկուսացված չլինել մյուս երկրներից: Մեծ հաշվով նրա պայքարն էլ ներառման համար է: Ներառումը բոլորին է մարդու իրավունքի և ազգերի ինքնորոշման տեսանկյունից:

Մասնավորեցվելով կրթության վրա՝ ընդգծվեց, որ չկա մի երեխա, որ առանձնահատուկ չլինի: Նա իր առանձնահատկությամբ համապատասխան կրթություն պետք է ստանա:

Մանկավարժների բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեն ծրագրերի ճկունությանը, ինչը բացակայում է մեզանում: Ս. Թադևոսյանը բերեց «Այբ» դպրոցի օրինակը, որը լավ կրթություն տալու համբավ ունի: Այս դպրոցի ամբողջ հայեցակարգը հիմնված է անհատական ուսուցման վրա. ամեն երեխա գնահատված է և իր կարիքին համապատասխան կրթություն է ստանում: Չի բացառվում, որ մի օր մեր կրթական համակարգն էլ ամբողջությամբ հասնի սրան: Բայց այսօր դեռ առաջին քայլերն են արվում: Խնդիրը բարձրացված է: Աշ-

խարիզ գնում է այս ուղղությամբ՝ անկախ ուսուցչի գիտելիքից, նրան տրված աշխատավարձից: Սրանք երեխայից դուրս հանգամանքներ են:

«Սա մարտահրավեր է մեզ համար, և այսօր մենք խոսեցինք մեր տեսլականից: Այդ տեսլականին պետք է գնանք, բայց այդ տեսլականին պետք է հասնել առաջին քայլն անելով»,- իր խոսքն ավարտելով՝ ասաց Ս. Թադևոսյանը: Նա պատասխանեց ներկաների հարցերին:

ԱՀ ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը, շնորհակալություն հայտնելով Ս. Թադևոսյանին բովանդակալից ներկայացման համար, ասաց, որ հետագա քայլեր անելու համար լրացուցիչ տեղեկություններ ստացան: 2019թ. Արցախում ուսուցիչների վերապատրաստումները կանցկացվեն հենց այս ուղղությամբ, քանի որ «եթե մի կողմից ասում ենք, որ անցնում ենք համընդհանուր ներառական կրթության, մյուս կողմից դա առանձնացվել է որպես մասնագիտական խմբերի, որպես առանձին երեխաների խմբի», իսկ նոր օրենքում չկան անձի խնդիրներ, կան առանձնահատկություններ, և հենց սրա տակ է թաքնված մտածելակերպը: Եթե դա ճիշտ ընկալենք և ճիշտ մեկնաբանենք, քաղաքականությունն էլ կփոխվի: Մենք բոլորս ներառման խնդիր ունենք, և Արցախը ներառման խնդիր ունի միջազգային համայնության հետ: Մենք չճանաչված, կտրված ենք աշխարհից և միջազգային համայնության մեջ ներառվելու խնդիր ունենք, չենք կարող կտրված լինել ընդհանուր զարգացումից: Յուրաքանչյուր երեխայի ներուժի բացահայտումը պետք է լինի կրթության խնդիր: Դա հենց ենթադրում է անհատական մոտեցում և պարտադիր շփում»:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՆՈՐԱՆՆԵՍ

ՏԱԳՆԱԳԱԿՑ, ՓՈԹՈՐԿԱԾԻՆ ՕՐԵՐԻ ՎԱԿԵՐԱԳԻՐ



Ընթերցողի սեղանին է մանկավարժ Նաիրա Առստամյանի անդրանիկ՝ «Տագնապալից ու փոթորկածին օրեր» գիրքը՝ նվիրված Արցախյան շարժման 30-ամյակին:

Ն. Առստամյանը ծնվել է 1953թ. փետրվարի 8-ին Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում: 1970թ. ոսկե մեդալով ավարտել է Առաջածորի միջնակարգ դպրոցը, 1974թ. ին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: 1974թ. գործուղվել է աշխատելու Մարտակերտի շրջանի Վերին Հռոնթաղի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, նաև՝ փոխտնօրեն: 1979-ից եղել է դպրոցի տնօրենը:

2000թ. ճանաչվել է շրջանի տարվա լավագույն հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 2001թ.՝ շրջանի դարի լավագույն ուսուցիչ, 2005թ. պարգևատրվել է ԼՂՎՊՀ վարչապետի պատվոգրով, 2009թ. նրան շնորհվել է վաստակավոր մանկավարժի կոչում, 2013թ. պարգևատրվել է ԼՂՎՊՀ վարչապետի մեդալով, Կրթության և գիտության նախարարության և Ազատամարտիկների միության պատվոգրերով: 2016թ. ստացել է ուսուցչի որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

Արցախյան շարժման ակտիվ մասնակիցներից է: 2018թ. պարգևատրվել է ԼՂՎՊՀ «Երախտագիտություն» մեդալով:

Գրքում տեղ են գտել տարբեր տարիների մամուլում լույս տեսած նրա թղթակցությունները, որոնց

մեծ մասն Արցախյան շարժման և պատերազմի տարեգրություն է: Կան նաև դպրոցական կյանքն արտացոլող և տարբեր բնագավառներին վերաբերող բազմապիսի հետաքրքիր նյութեր:

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում տեղի ունեցավ «Տագնապալից ու փոթորկածին օրեր» գրքի շնորհանդեսը: Արցախի գրողների միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանն իր ներածական խոսքում բարձր գնահատեց գիրքը՝ նշելով, որ այն գրված է լավ գրչով՝ պարզ, պատկերավոր, ամենազվազոր՝ իրադարձությունների կիզակետում գտնվող մարդու ակամատեսությամբ: Եվ որպես Արցախյան շարժման տարեգրության վառ էջերից՝ ունի աղբյուրագիտական նշանակություն, ու տարիների հետ նրա արժեքն ավելի կբարձրանա:

Գիրքը բացվում է համանուն վերնագրով մի վավերագրությամբ. «1991թ. ամառն էր: Երկնքից կրակ էր թափվում, բայց արցախցիներին այրողը երկրային կրակ էր, որ ամենուր տարածում էին օժանկանները»: Դա պատմություն էր այն մասին, երբ 1991թ. օգոստոսի 13-23-ը գյուղի կանայք նրա առաջնորդությամբ կտրել են գյուղի ներքևով անցնող մայրուղին և կանգնեցրել զինվորական մեկ «ՈւՍԶ» և մեկ «Ուրալ» ավտոմեքենա, զինաթափել ու պատանդ են վերցրել 11 խորհրդային զինվորի, որոնցից խված 11 ինքնաձիգներով զինվել էր ջրկատար և դարձել շրջանի շտապ օգնությունը, առաջնորդել է կանանց՝ փակել գյուղի մուտքը՝ չթողնելով, որ գրահապատ փոխադրիչները մտնեն գյուղ, ձերբակալեն տղաներին: Այն ժամանակ մեծ արձագանք գտած այս պատմությունը, ցավոք, ցայսօր գրականության մեջ վերագրվում է միայն Հաթերի կանանց, որոնք նույն այդ ժամանակ նմանատիպ գործողություններ էին կատարել՝ պատանդառնելով 27

զինվորի: Շնորհանդեսի ելույթ ունեցած՝ «Գրիգոր Նարեկացի» համալսարանի պատմության ամբիոնի վարիչի տեղակալ Ալիք Սարգսյանը, շնորհավորելով հեղինակին Արցախյան շարժմանը նվիրած արժեքավոր գիրք գրելու համար, պատմաբանի հայացքով գնահատեց գրքի արժեքը՝ ասելով, որ ծանոթացավ այնպիսի կարևոր խնդիրների, որոնք արդիական են, շատ կողմերից դեռևս չլուսաբանված: Եվ առանձնացրեց դրանցից մի քանիսը, մասնավորապես, որ պատմություն կերտողները միշտ չէ, որ ըստ արժանվույն են գնահատվում և հիշվում

թյամբ ուղարկվել է Հայաստան՝ ցուցարարներին բաժանելու:

Բանախոսն ուշադրություն հրավիրեց այն բանի վրա, որ գրքում զետեղված հոդվածների մի զգալի մասը թվագրված է 1990-1994 թվականներին, երբ անգամ բռնադատության մեջ գտնվելով՝ հեղինակը իրատեսաբար հոդվածներով հանդես է եկել արցախյան և հայաստանյան մամուլում: Այսպես, «Համուն Արցախի, համուն Հայաստանի» հոդվածում նա կոչ է արել հայ մայրերին ունենալ շատ երեխաներ՝ ինքն էլ օրինակ ծառայելով: Տարբեր վայրեր ցրված համագյուղացիներին կոչ է արել վերադառնալ գյուղ, տեր կանգնել իրենց օջախներին, շեմացնել հայրենի հողը. միայն այդպես կարող են վերացնել թուրքի հետքերը: Որպես կրթական գործի հմուտ կազմակերպիչ՝ նա մշտապես արձագանքել է ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին, իր առաջարկություններն արել, լուծել մի շարք հիմնախնդիրներ:

Արցախյան շարժման, պատերազմի և զինադարձի տարիներին նրա ղեկավարած դպրոցի կուլտիվմ ակտիվ դեր է ունեցել և օրինակ հանդիսացել գյուղի բնակիչների համար: Գյուղն ազատագրվելուց հետո առաջինն է վերադարձել, դեռևս 1993թ. մարտին, երբ Քարվաճառում թեժ մարտեր էին ընթանում, դպրոցը բացել: Շատ բռնագաղթածներ իսկույն վերադարձել են գյուղ, և 23 աշակերտով բացված դպրոցը հունիսին ունեցել է 115 աշակերտ: Այստեղ սովորելու էին զալիս նաև հարևան գյուղերի աշակերտները:

Բանաստեղծուհի, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ջինաիդա Բալայանն արժևորեց արցախական աշխարհի գեղարվեստական ու քաղաքական, մեր ժողովրդի հաղթողի նկարագիրը տալու հեղինակի ձիրքը:

Համալսարանի ՏՏ ամբիոնի վարիչ Գեղամ Միքայելյանն անչափ հուզել է նահատակ ազատամարտիկներին նվիրված շարքը, որոնց մի մասին անձամբ է ճանաչել

որպես իր ուսուցիչ, գաղափարի զինվոր (Արամայիս Բեկնազարյան, որը մեծ գործեր է կատարել Շարժման ժամանակ, սակայն մնացել անհայտ, ուսանողական և մարտական ընկեր Գրիշա Մուրադյան, որը ցերեկն ուսուցիչ էր, գիշերը՝ ֆիդայի և ուրիշներ):

Բանաստեղծ Արիս Գրիգորյանը նշեց, որ գիրքը եկավ սրբագրելու պատմագրության որոշ բացեր:

Բանաստեղծուհի Սոնա Համբարձումյանի տեսակետով գիրքը հեղինակի ապրած օրերի, հույզերի, ընդվզումների համալիր է, այն իր անկեղծ բովանդակությամբ կարողանում է հավերժության զգացում հաղորդել ընթերցողին: Հեղինակն իր հուշապատումների, հոդվածների միջոցով տեսանելի ու պարզ է դարձնում ժամանակաշրջանը, տիրող վիճակը, ինչն էլ ազնիվ ու հետաքրքիր պատկեր է ստեղծում ընթերցողի համար: Պետության զարգացման համար կարևոր նախապայման համարվող գյուղն իր առօրյայով, հատկապես ապագայի հանդեպ իմաստուն անհանգստություններով գրքի առանցքն է կազմում: Կարևոր է, որ հասարակական ակտիվությունը չի խանգարել Ն. Առստամյանին՝ միաժամանակ լինել օրինակելի հայուհի, մանկավարժ և մայր: Հեղինակը հայրենամեղ գործ է կատարել՝ մեկտեղ համախմբելով տարբեր տարիների իր գրածները, բողոք-պահանջները և իհարկե, ժպիտները, ամփոփեց բանախոսը:

Գրքի հանդեպ իրենց զգացումները հայտնեցին «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ուսանողուհի Անգելինա Սվիկյանը, ԱրՊՀ ուսանողուհի, հեղինակի թոռնուհի Մերի Հարությունյանը:

ԳՍ նախագահ Վ. Հակոբյանը խորհրդանշական նվեր հանձնեց հեղինակին՝ նշելով, որ գյուղական ակամատեսության մեջ մնալ կարգի մարդիկ մեր ժողովրդի հարստությունն են:

Վերջում ելույթ ունեցավ գրքի հեղինակ Ն. Առստամյանը և պատմեց՝ ինչպես է ծնվել գիրքը, ասաց, որ թոշակառու լինելով՝ արդեն շատ ժամանակ ունի, ու այս գիրքը վերջինը չի լինի:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

Նաիրա Առստամյան մանկավարժի, քաղաքացու, մտավորականի դիմանկարն ամբողջացնելու նպատակով ստորև մեջբերենք հատվածներ նրա «Տագնապալից ու փոթորկածին օրեր» գրքից

«...Եվ միայն մենք՝ բռնագաղթածներս, կարող ենք ջնջել թուրքի հետքերը մեր վերադարձով, մեր պայքարով, մեր աշխատանքով...»

Վերադարձեք, համագյուղացիներ, վերադարձեք, տեր կանգնեք մեր օջախներին, մեր հանդ ու դաշտին, մեր մայր հողին: («Այստեղով թուրքն է անցել», «1993թ., մայիս», «ԼՂ Հանրապետություն»):

«...Ի հեճուկս նրանց՝ այսօր արցախցի մայրերը կրկնակի պարտավոր են երեխաներ ունենալ և հանուն Արցախի, և՛ հանուն հայության: Այո, շաբաթներով ցրտաշունչ ծնունդ մարզկենտրոնի հրապարակում ցույցի կանգնող կինը չպիտի զլանա անցուն գիշերներ անցկացնել մանկան օրորոցի մոտ, որը գոհատնան համար ցույցերից պակաս կարևոր միջոց չէ: Այն մայրը մայր չէ, որը կարող է, բայց չի ուզում ազգը բազմացնել, այն օջախը հայի օջախ չէ, որն իր հարկի տակ կարող է, բայց չի ուզում ունենալ Անդրանիկ, Գևորգ, Սերոբ, Հրայր... Կոչ են անում բոլոր մայրերին՝ հանուն Արցախի, հանուն հայության, երեխաներ ունեցեք...» («Օրհնվի ծնունդը, մանկիկն», «Մտորոդային Հայաստան», մարտ, 1990թ.):

«Սուսմայիթի ողբերգությունից, Սպիտակի երկրաշարժից հետո ես թերթերում հան-

դես եմ եկել կոչով, որ ամբողջ աշխարհը ոտքի է ելել՝ օգնելու վերացնել երկրաշարժի պատճառած՝ միլիարդների հասնող նյութական վնասը, բայց ոչ մի ազգ, ոչ մի երկիր չի կարող վերադարձնել հայ ժողովրդի կորած տասնյակ հազարավոր մարդկանց կյանքը՝ ինչքան էլ սրտացավություն ցուցաբերի: Այդ մեծ պատասխանատվությունն ընկնում է հայ կանանց վրա: Միայն նրանք կարող են հնարավորին չափով լրացնել ազգի կորուստը, ծննդաբերել այն կանանց փոխարեն, որոնք չհասցրին վայելել մայրության բերկրանքը, որոնք անդամահատվեցին և ի վիճակի չեն մայրանալ, լրացնել այն աշակերտների պակասը, որոնց դասարանները դամբարանների վերածվեցին, այն ուսանողների պակասը, որոնք լավագույն մասնագետներ կլինեին, վերջապես կորցրած ապագա հայ գիտնականների, գրողների, բժիշկների, ուսուցիչների, բանվորների ու հողագործների պակասը լրացնել: Միայն հայ մայրը կարող է լրացնել հայի կորուստը, և թող յուրաքանչյուր հայ երիտասարդ կին ընկալի, որ այս կոչը հենց իրեն է վերաբերում և ազգին նվիրել երեխաներ, որը կլինի ամենամեծ նվիրատվությունն ու հայրենասիրությունը:

Արցախի երիտասարդ մայրեր, ձեր տատիկները, մայրիկները պետք եղած ժամա-

նակ գեներ ձեռքներին պաշտպանել են հայրենիքը, մարտնչել թշնամու դեմ: Այսօր դրա կարիքը չկա: Շատ որդիներ ծնելով՝ դուք էլ դարձեք հայրենասեր՝ հանուն մեր ջքնաղ Արցախի, հանուն հայության:

Իսկ նրանք, ովքեր այլևս չեն կարող երեխաներ ունենալ, թող հետևեն բարերար Լևոն Հայրապետյանին և իրենց կողքին ծնվող յուրաքանչյուր երեխայի նվիրատվություն անեն, ստեղծեն երիտասարդ ընտանիքներին աջակցելու հիմնադրամ, որպեսզի նրանք շատ երեխաներ ունենան» (ԼՂՎՊՀ ուսուցիչների 2006թ. առաջին համագումարում ունեցած ելույթից):

«...Հետո Ն. Առստամյանը սկսում է ուղիներ որոնել ութնամյակը միջնակարգ դարձնելու: Համոզում է գյուղի կանանց, որ շատ երեխաներ ունենան, դպրոցը միջնակարգ կդառնա, և իրենց երեխաները ստիպված չեն լինի հարևան գյուղերում սովորելու, այլ կողքի գյուղերից կգան իրենց դպրոց: Եվ անձնական օրինակով վարակում է նրանց: «83-ին երրորդ երեխաս ունեցա միջնակարգի համար»,-ասում է:

«...Ինչքան էլ աշխարհը մեզ օգնության ձեռք մեկնի, մեր ցավը մենք պիտի բուժենք,

ազգի կորուստը մենք պիտի լրացնենք»: «Գյուղի երիտասարդ կանանց հորդորում-համոզում է, որ մի երեխա էլ «ազգի համար բերեն»: Եվ դարձյալ անձնական օրինակով խրախուսում է բոլորին: 1990թ. ծնվում է չորրորդ զավակը՝ Արցախը: Այդ տարի գյուղում ծնվեց 26 երեխա: Դա անմասնադեպ երևույթ էր» («Լուսարար», 2007թ.):

«Մեր շարժումը միասնություն է առաջացրել համայն աշխարհի հայության մեջ: Այդ շարժումն այժմ թևակոխել է իր վճռական փուլը: Պառակտում առաջացնել մեր ժողովրդի մեջ, անվստահություն սերմանել նրա նոր ղեկավարների հանդեպ, ոտքի հանել ժողովրդին՝ նման ղեկավարներից ազատվելու համար, նշանակում է՝ տապալել մեր Շարժումը, խախտել մեր միասնությունը, աղավաղել մեր ցանկությունը (առանց այդ էլ քիչ չի խեղաթյուրվում մեր պահանջը): Ետ նայենք մեր պատմությանը... Միշտ Վարդանի կողքին Վասակ ենք ունեցել, Միսիթարի կողքին՝ տեր Ավետիս, մի խաբվեք օտարի քաղցր խոսքերից ու զանձեղից, մի ձգտեք այդպես անձնական հաշիվներ մաքրել կամ էլ «զահ բարձրանալ» այդ ձևով. այլ է ժամանակը, բոլորս մի շունչ ու հոգի պիտի դառնանք, միայն մի իղձ, ցանկություն ու նպատակ պիտի ունենանք, որ կարողանանք հարատևել, հարթել...»: («Գործելուց առաջ խորհել է պետք», «Ջրաբերդ», 1990թ. մարտի 3):

ԿՐԹԱՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՋԱՆՆԵՐ

ԱՐՑԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԱԺՅՏԱԿԱՆ ԴԱՐՔՆՈՅԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցը 80 տարեկան է: Փառահերոս հոբելյանը հանդիսավորապես նշվել է կրթօջախի բացման օրը՝ նոյեմբերի 7-ին, դպրոցի նորակառույց շենքում: Անգնահատելի է դպրոցի դերը մեր երկրի մշակութային-հասարակական կյանքում. տասնամյակներ շարունակ մշակույթի այս օջախը իսկական դարբնոց է եղել Արցախի երաժիշտների համար, հազարավոր սաներ են թրծվել նրա քուրա-յուն՝ ստանալով ոչ միայն մասնագիտական կրթություն, այլև դառնալով երաժշտական բարձր ճաշակի կրողներ: Այստեղ ուսումնառություն անցած սովորողների մեծ մասը հետագայում երաժշտությունն ընտրել է որպես մասնագիտություն և, շարունակելով կրթությունը այս ապարեզում, համալրել երկրամասում գործող մշակութային տարբեր օջախների կոլեկտիվները, դարձել նոր ստեղծող արվեստի ու երաժշտության դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների, նվագախմբերի, համույթների հիմքն ու կորիզը: Այսօր էլ դպրոցը շարունակում է ակտիվորեն մասնակցել հանրապետությունում երաժշտական կյանքի զարգացման ու հասարակության հոգևոր դաստիարակության կարևոր գործին:



Հրեյանական միջոցառման մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու դպրոցի պատմությանը նախասրահում կազմակերպված ցուցահանդեսի միջոցով: Մեծադիր վահանակների ու ալբոմների ցուցադրումներում ներկայացված էր կրթօջախի անցած ուղին. 1938-39 ուստարվա համար դիմորդների ընդունելության հայտարարությունից մինչև տարբեր տարիների շրջանավարտների ավարտական լուսանկարներ, առաջին տնօրենի հաշվետվության քաղվածքից մինչև կրթօջախի պարապմունքների, համերգների ու մրցույթների վավերագիր-պատկերներ: Դպրոցի կենսագրության հետաքրքիր դրվագներն ամփոփված են խնամքով կազմված ալբոմներում, որոնցում կարելի է տեսնել տարբեր տարիների ուսուցիչների և շրջանավարտների լուսանկարներ, թերթել հաշվետու համերգների տարեգրությունը, ծանոթանալ դպրոցի ձեռքբերումներին՝ ներկայացված դիպլոմների ու պատվոգրերի տեսքով:

Ուշագրավ անենահին փաստաթղթերից առանձնանում է առաջին ընդունելության հայտարարությունը, որում մասնավորապես գրված է. «Դպրոցն ունենալու է հետևյալ մասնաճյուղերը՝ դաշնամուրի և ջութակի, որտեղ ընդունվելու են 8-10 տարեկան երկսեռ երեխաները, և թառի, որտեղ ընդունվելու են 6-15 տարեկան երեխաները: Դիմումներն ընդունվում են Ստեփանակերտի ոչ լրիվ միջնակարգ դպրոցի գրասենյակում, ցերեկվա ժամը 2-4-ը: Պարապմունքներն սկսվելու են ս. թ. սեպտեմբերի 15-ից»: Գրության մեջ հիշատակվող ոչ լրիվ միջնակարգ դպրոցը քաղաքի նախկին հ. 1 դպրոցն էր («Արմենիա» հյուրանոցի տեղում), որի ծախս թևում հատկացված մի քանի դասասենյակներում էլ կազմակերպվեցին պարապմունքները: Ցուցադրանքի հետաքրքիր նյութերից էր նաև առաջին տնօրեն Պերճ Հայրապետյանի 1939թ. հունվարի 7-ի թվագրությամբ «Երիտասարդ բոլշևիկ» թերթում տպագրված քաղվածքի պատճենը. «Ստեփանակերտի երաժշտական դպրոցի գոյության 5 ամսում նվաճումների մասին. 38 աշակերտ՝ 5 աղբբեջանցի, 31 հայ, 2 ռուս: Ունի երեք բաժին՝ դաշնամուրի, ջութակի և թառի: Դպրոցն ունի նաև նոտայագիտության խմբակ՝ մեծահասակների, միջահասակների և փոքրահասակների»: Տարեցտարի ընդլայնվել է բաժինների ցանկը, մեծացել սովորողների թիվը. ահա 1950 թվականից

պահպանված ևս մի արխիվային փաստաթուղթ, որում ի մի են բերված Ստեփանակերտի երաժշտական 7-ամյա դպրոցի անցած ուղու ձեռքբերումները. «...Անցած 12 տարիների ընթացքում բավականաչափ աճել ու ամրապնդվել է երաժշտական դպրոցը. տվել է 8 թողարկում, 45 շրջանավարտ, որոնցից շատերն այժմ սովորում են Բաքվի, Մոսկվայի և Միության մյուս քաղաքների բարձրագույն երաժշտական դպրոցներում: Ես այժմ ունի որակյալ ուսուցչական կազմ, անհրաժեշտ քանակությամբ երաժշտական գործիքներ, դպրոցի սեփական շենք: Դպրոցն այս տարի ունեցել է դաշնամուրի, ջութակի, թառի, քամանջայի և կլառնետի դասարաններ, որոն-

ցում սովորել են 95 աշակերտներ»: Այսօր արդեն դպրոցում գործում են հետևյալ բաժինները՝ դաշնամուրային, լարային, փողային-հարվածային, ժողգործիքային, թեորիայի և վոկալ-երգչախմբային: Նշված բաժիններում սովորում է 557 աշակերտ, որից 350-ը՝ դաշնամուրի բաժնում: Վերջինս գործում է դպրոցի ստեղծման առաջին օրից և անվերապահ կարելի է ասել ամենակայացածն է՝ տարիներ ի վեր ձևավորված կատարողական արվեստի ավանդույթներով և վաստակաշատ ու փորձառու ուսուցիչների ընդգրկմամբ: 1938-ին դաշնամուրի առաջին դասարանը բացել է Նինա Միրզաբեկյանը, որի առաջին աշակերտներից է եղել ԱՀ արվեստի վաստակավոր գործիչ, դաշնակահարուհի Բելա Հակոբջանյանը: Վերջինիս խոսքով՝ այդ տարիներին բաժնի կայացման գործում նշանակալի ավանդ են ունեցել ծագումով հրեա Սիմեոն Բերգելսոնը, Ֆիմա Ավետովան, Մարիա Դուրմիշևան և ուրիշներ: Գոյության ողջ ընթացքում դպրոցը գործել է տարբեր շենքերում. ինչպես նշեցինք՝ նախկին հ. 1 դպրոցի ծախսակողմյան թևի մի քանի դասարաններում, ապա նախկին «Պատանի տեխնիկների կայանի» տեղում՝ ներկայիս «Վալենթ Գարդեն» համալիրի տարածքում, իսկ հետո մարզկոմի նախկին շենքում, որտեղ երկար տարիներ գործել է դպրոցը՝ մինչև ներկայիս շենքը տեղափոխվելը: Բնականաբար, ժամանակի հետ բաժինը համալրվել է երիտասարդ մասնագետներով, որոնք ոչ միայն եղած ավանդույթների կրողն ու շարունակողն են, այլև՝ նոր ստեղծագործական մոտեցումների ու գաղափարների: Դպրոցի սաները պարբերաբար մասնակցում են երաժիշտ կատարողների տարբեր միջազգային մրցույթ-փառատոների՝ գրավելով մրցանակային տեղեր:

Դպրոցում գործում է երգեցողության երեք ուղղություն՝ դասական, ժողովրդական և էստրադային, ինչպես նաև երեք երգչախումբ՝ կրտսեր, միջին և ավագ: Բաժնի սաները բազմիցս մասնակցել են «Ամառեռու», «Վերածնունդ», «Երգող Հայաստան» մրցույթ-փառատոներին՝ ակտիվորեն ներգրավվելով նաև ներդրողական և քաղաքային տարբեր միջոցառումներում: Միջոցառմանը կոմիտասյան «Անձրևն եկավ» և «Սոնա յար» կատարումներով հանդես եկավ դպրոցի ուսուցչական երգչախումբը՝ խմբավար Գոհար Գաբրիելյանի ղեկավարությամբ:

Իր պատկառելի տարիքով ու վաստակով առանձնացող կրթօջախի ներկայիս տնօրեն Արթուր Պետրոսյանը շնորհավորեց հարազատ կոլեկտիվին և շնորհակալություն հայտնեց հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեռնիկ Հովհաննիսյանին, կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանին, Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանին՝ աջակցության համար: Անդրադառնալով ցուցահանդեսին՝ նա նշեց, որ լուսանկարների միջոցով փորձել են ներկայացնել կրթօջախի բազմամյա պատմության որոշ ակնթարթներ: Ողջ կոլեկտիվով ցուցադրանքի ստեղծմանը ձեռնամուխ են եղել դեռևս սարիլից, հավաքված լուսանկարները թվայնացվել ու արխիվացվել են՝ պատմությանն ու զալիք սերունդներին պահ տալու միտումով: Ա. Պետրոսյանը մի ուշագրավ շեշտադրում ևս արեց. 1925 թվին, իսկ ըստ որոշ աղբյուրների՝ 1924-ին, երաժշտական դպրոց բացելու նպատակով Ստեփանակերտ էր եկել անվանի կոմպոզիտոր, խմբավար և մանկավարժ, հայկական դասական ռոմանտի սկզբնավորող Ռոմանոս Մելիքյանը: Ցավոք, նրան չի հաջողվել, թեպետ ոչ մի տեղ փաստացի չի նշվում, բայց կասկած չկա, որ հենց Աղբբեջանի վարած քաղաքականության պատճառով չի իրագործվել նրա նպատակը: Հատկանշական է, որ երգահանն իր հետ բերած դաշնամուրը որպես նվեր թողել է քաղաքին: Բելա Հակոբջանյանի խոսքով, երբ 1961 թվին ինքը եկել է աշխատելու երաժշտական դպրոցում, Ռ. Մելիքյանի նվիրած դաշնամուրը դեռևս պահպանվում էր:

Անցած տարիների ամենամեծ ձեռքբերումը, ըստ տնօրենի, իրենց շրջանավարտներն են, որոնք Հյուսիսային Ամերիկայից մինչև Ավստրալիա կատարողական արվեստում և մանկավարժության ոլորտում պահանջված մասնագետներ են: Ավստրալիայում երաժշտական փայլուն կարիերայով հայտնի է Արցախում շատ սիրված դերասանական ընտանիքի՝ ժողովրդական արտիստներ Բենիկ Օվչյանի և Թամարա Մելքունյանի դուստր Լիլյա Օվչյանը: Դպրոցի բազմաթիվ շրջանավարտներ հաջողությամբ երաժշտական գործունեություն են ծավալում Կանադայում, Մոսկվայում և այլուր: Ներկա պահին սաներից մեկը՝ շեփորահար Արամ Գալստյանը, մրցույթի է մեկնել Կիև, և ամհամբերությամբ սպասում են արդյունքներին: Իրենց արդի խնդիրներից տնօրենն առանձնացրեց ջեռուցման հարցը, որի լուծումն ընթացքի մեջ է: Խնդրահարույց է նաև ժողգործիքների բաժնի դիմորդների սակավությունը. ունեն մեկ թառ նվագող, իսկ քամանջայի բաժնում մեկ աշակերտուհի ունեին, որն այս տարվապես չի նվագում: Քամանջայի դասատու, ՀՀ-ից հրավիրված մասնագետ Հակոբ Խալաթյանն առայժմ դպրոցում ստեղծել է ժողգործիքների համույթ, որը պատրաստվում է էլույթ ունենալ նոյեմբերի 30-ին կայանալիք դպրոցի հոբելյանական համերգին:

Դպրոցի հիմնադրման օրվանից գործող ջութակի դասարանը հիմք է դարձել լարային բաժնի համար, որը տարեցտարի առավել մեծ պահանջարկ է վայելում: Հետագայում լարային բաժինն ընդլայնվել է. ոչ միայն ավելացել է ջութակի դասարանների քանակը, այլև բացվել են թավջութակի և կիթառի դասարաններ: Հավելենք, որ դպրոցն ունի ջութակահարների համույթ, իսկ հետպատերազմյան շրջանում կայացած «Ամառեռու» մրցույթում լարային բաժինը ներկայացրել է մասնակիցներ և ունեցել դափնեկիրներ:

Դպրոցի փողային բաժնում հիմնական գործիքներից բացի՝ կլարնետ, սաքսոֆոն, շեփոր, ֆլեյտա, աշակերտները հաճախում են նաև հարվածային գործիքների դասըն-

թացներին: Բաժնի աշակերտները ևս ակտիվորեն մասնակցում են միջազգային մրցույթ-փառատոների և միշտ վերադառնում են պատվավոր մրցանակներով ու դիպլոմներով:

Թերիայի կամ տեսության բաժնի խնդիրը ստեղծման առաջին օրից եղել է մնում է սովորողների մոտ մի շարք անհրաժեշտ հմտությունների և ունակությունների զարգացումը՝ երաժշտական լսողություն, ճիշտ ու մաքուր երգեցողություն, ռիթմի ընկալում և այլ տեսական հարցեր: Այս դասաժամերին ուսումնասիրում են դասականների կյանքն ու գործունեությունը, ծանոթանում տարբեր երաժշտական ժանրերի: Բաժնի աշակերտների ուժերով բեմադրվել են մանկական օպերաներ, կազմակերպվում են մրցույթներ սոլֆեջիո և երաժշտական գրականության թեմաներով, երաժշտական այբուբենի տոներ, միջոցառումներ՝ նվիրված աշխարհահռչակ կոմպոզիտորների՝ Բախ, Շոպեն, Բաբաջանյան և ուրիշների, իսկ Կոմիտասին նվիրված երեկույթներն արդեն ավանդույթ են վերածվել:

Հատկանշական է, որ իր գոյության ողջ ընթացքում Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի ուսուցիչների ու սովորողների ջանքերով միշտ ստեղծվել են գործիքային և վոկալ-գործիքային նվագախմբեր՝ փողային, ժողգործիքային և էստրադային: Արդեն մեկ տարի է՝ դպրոցում գործում է «Քաղաքի տղաները» գործիքային նվագախումբը՝ Իննա Գասպարյանի ղեկավարությամբ: Այն իր ուրույն տեղն է զբաղեցնում կրթօջախի ստեղծագործական կյանքում:

Միջոցառումն անցավ ջերմ ու տոնական մթնոլորտում, հնչեցին շնորհավորանքներ ու բարենաղթանքներ: Ներկա ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը և շնորհավորել է կրթօջախի 80-ամյակը՝ կարևորելով կրթօջախի դերը հանրապետության մշակութային կյանքում: Ըստ նախարարի՝ կրթօջախը պետք է պարտավոր է իրեն դրսևորել Մեծն Կոմիտասի անվանը հարիր: Հաջորդ տարի կլրանա համեմարել երաժշտի ծննդյան 150-ամյակը, և դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները պետք է ձգտեն ըստ արժանվույն ներկայացնել կրթօջախը:

Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը, ընդգծելով դպրոցի դերը որպես հանրապետության երաժշտական հաստատությունները սնուցող մայր երակի, հատկանշել է նրա նշանակալի ավանդը հայ մշակույթի զարգացման գործում. «Մենք պարտավոր ենք մեր նախնիների ստեղծած մշակութային, հոգևոր և նյութական արժեքները պահպանել, հարստացնել ու փոխանցել եկող սերունդներին: Այսօր էլ Արցախի իշխանությունները շարունակում են ուշադրության կենտրոնում պահել մշակութային ոլորտի զարգացման հարցերը՝ կառուցելով երաժշտական նոր դպրոցներ և մշակութային օջախներ, ձեռք բերելով համապատասխան երաժշտական գործիքներ և ընդառաջելով ու աջակցելով հնարավորության սահմաններում:

Մշակույթի և արվեստի բնագավառում ունեցած վաստակի և Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի ստեղծման 80-ամյակի կապակցությամբ ԱՀ ՄԵՀԶ նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը և երաժշտական դպրոցի տնօրեն Արթուր Պետրոսյանը կրթօջախի մի խումբ ուսուցիչների խրախուսել են պատվոգրերով, շնորհակալագրերով և դրամական պարգևներով: Միջոցառման վերջում ներկաները շրջել են ցուցասրահով և ծանոթացել կրթօջախի 80-ամյա տարեգրությանը: Մենք նույնպես միանում ենք բոլոր շնորհավորանքներին ու ասում՝ երթո՛ւ անվախճան լինի, հաջողություններդ՝ անսպառ, փառքդ՝ անվանդ հարիր:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԻՔՃÀÒØÛ²ÛÆԻԹÆ²ÛÆԹ²ÛԾ²ÎԾÂ²Î²Û äðàòÛ°ðàòØ 2017-2018 àòêî²ðàòØ Î²î²ðî²Î² ²ԲÊ²î²ÛøÛ°ԾÆØ²êÆÛ

Ըստ շրջվարչակազմի աշխատակազմի ԿՍ բաժնի վարիչ Խ. ՎԱՐՂԱՆՅԱՆԻ օգոստոսյան խորհրդակցությունում զեկուցման

Ամենամյա խորհրդակցության նպատակն է անդրադառնալ նախորդ ուսումնական տարում ունեցած ձեռքբերումներին, քայլեր ձեռնարկել բացթողումների շտկման ուղղությամբ, խոսել հետագա անելիքների մասին:

Հաշվետու ժամանակահատվածում ԿՍ բաժինն իր աշխատանքային գործունեությունն իրականացրել է՝ առաջնորդվելով ԱՀ կառավարության որոշումներով, ԿԳՍ նախարարության հրամաններով ու գրություններով, ԿՍ բաժնի աշխատանքային պլանով և շրջվարչակազմի հրահանգներով՝ ապահովելով դպրոցների բնականոն աշխատանքը:

2017-2018 ուսումնական տարում շրջանում կրթական գործունեություն են իրականացրել 16 հանրակրթական դպրոցներ, որոնցից 11-ը միջնակարգ է, 5-ը՝ հիմնական: Նշված դպրոցներում ընդգրկված էր 709 աշակերտ (նախորդ տարվա 700-ի փոխարեն), որից 119-ը՝ Քարվաճառի միջնակարգ դպրոցում (նախորդ տարվա 118-ի փոխարեն), իսկ մնացած 590-ը՝ գյուղական համայնքների դպրոցներում (նախորդ տարվա 582-ի փոխարեն): Այդ թվում 1-ին դասարան է հաճախել 67 աշակերտ (նախորդ տարվա 74-ի փոխարեն): Ուսումնական տարվա սկզբին ունեցել ենք 120,5 դասարան-լրակազմ, որը պահպանվել է նույնությամբ, սակայն աճել է աշակերտների թիվը՝ հասնելով 710-ի: Ըստ նախկին կանոնի 2018-2019 ուստարում շրջանի դպրոցներ են հաճախելու 767 աշակերտներ, այդ թվում՝ 81 առաջին դասարանից:

Շրջանի դպրոցներում դասավանդել են 227 ուսուցիչներ, այդ թվում՝ տնօրեններ, փոխտնօրեններ, նրանցից 185-ն ունի բարձրագույն մանկավարժական, 13-ը՝ թերի բարձրագույն, 19-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն, իսկ 10-ը ոչ մասնագետներ են: Պետության կողմից տարվող քաղաքականության արդյունքում շրջանի մի քանի դպրոցներում մասնագետների պակասը լրացվել է գործուղված մասնագետներով, սակայն պետք է նշենք, որ շրջանում, այնուամենայնիվ, զգալիորեն է ուսուցիչների պակաս, հատկապես՝ ռուսաց լեզվի, օտար լեզվի, ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչների կարիք, որը բացասական է ազդում ուսման որակի վրա:

Շրջանի հանրակրթական դպրոցների ուսումնանյութական բազան բավականին համալրվել է դպրոցական գույքով, համակարգիչներով և տպիչ սարքերով, բոլոր դպրոցներն ապահովվել են տարբեր դասարանների դասագրքերով, առարկայական պաստառներով, մեթոդական գրականությամբ:

Հնարավորության սահմաններում դպրոցներում կատարվել են դպրոցների ընթացիկ վերանորոգման որոշակի աշխատանքներ, բարեարձրների և համայնքի ղեկավարի ջանքերի շնորհիվ վերանորոգվել է Նոր Էրբեջի միջնակարգ դպրոցի շենքը, սակայն շրջանում ունենք դպրոցներ, որոնց նորոգումը մեծ ներդրումներ է պահանջում, և հատկապես գումարը չի բավականացնում վերանորոգումը լիարժեք իրականացնելու համար: Հատկապես շրջանի Ակնաբերդի և Նոր Բրաջուր համայնքների դպրոցներում պետք է իրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ, Ջուարի դպրոցի վերանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են, Չարեքտարում սկսվել է նոր դպրոցական շենքի կառուցումը, Նոր Խարխալուտ համայնքում անհրաժեշտ է կառուցել նոր դպրոցական շենք, իսկ Նոր Մանաշիղի դպրոցական շենքը կարիք ունի դասասենյակների ավելացման:

Շրջանի հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվել և իրականացվել են պետական, ազգային նշանակություն ունեցող մի շարք միջոցառումներ:

Մասնավորապես 2017-2018 ուստարվա սեպտեմբերի 1-ը՝ Գիտելիքի ու դպրության օրը, շրջանի բոլոր դպրոցները դիմավորել են պատշաճ ձևով, կազմակերպվել են արիության դասեր:

Սեպտեմբերի 2-ի՝ ԼՂՀ հռչակման 26-րդ տարեդարձի կապակցությամբ շրջանի դպրոցներում անցկացվեցին միջոցառումներ, ծաղկեպսակներ դրվեցին, և հարգանքի տուրք մատուցվեց Արցախյան գոյամարտում նահատակվածների հուշարձանի մոտ:

Շրջանի դպրոցներում միջոցառումներ են իրականացվել հոկտեմբերի 5-ին՝ Ուսուցչի մասնագիտական տոնին նվիրված:

Մայրենիի միամսյակին և Արցախյան շարժման 30-ամյակին նվիրված՝ կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, մրցույթներ, լույս ընծայվել պատի թերթեր: Հատկապես առանձնահատուկ էր Քարվաճառի միջնակարգում կազմակերպված միջոցառումը, որը ԿԳՍ նախարարության կողմից հայտարարված մրցույթում արժանացավ 1-ին մրցանակի:

Ի հիշատակ ապրիլյան քառօրյա պատերազմում նահատակված հայոց քաջերի՝ ապրիլի 2-5-ը շրջանի հանրակրթական դպրոցներում անց են կացվել տարաբնույթ միջոցառումներ, բացվել փառքի անկյուններ:

Ապրիլի 24-ին նշվել է Հայոց ցեղասպանության 103-րդ տարելիցը, դպրոցներում լույս են ընծայվել պատի թերթեր:

Մայիսյան եռատոնին՝ Շուշիի ազատագրման, ԱՀ պաշտպանության բանակի և Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի օրվան նվիրված, բազմաբնույթ տոնական միջոցառումներ են իրականացվել, 9-12-րդ դասարանների աշակերտների միջև անց է կացվել արդեն ավանդույթ դարձած շարադրությունների ամենամյա մրցույթ՝ ներդպրոցական և շրջանային փուլերով: Համեմատաբար լավակային աշխատանքները ներկայացվել են մրցույթի հանրապետական փուլին:

Դպրոցներում սովորողների գիտելիքների մակարդակն ստուգելու նպատակով գնահատման և թեստավորման կենտրոնի հրահանգով և ուղարկված քննական առաջադրանքներով շրջանի բոլոր ուսումնական հաստատություններում անց են կացվել տարբեր դասարանների սովորողների արտաքին ընթացիկ գնահատումներ, ցուցաբերած արդյունքների վերաբերյալ տրվել են համապատասխան հանձնարարականներ: Չմայած արդյունքները դեռևս գոհացուցիչ չեն, սակայն նկատելի է որոշակի դրական աճ և ավելի օբյեկտիվ ու հետևողական աշխատանք:

Առարկաների նկատմամբ առաքելությունն ավելի ընդլայնելու և հետազոտություն կարողություններ ունեցող երեխաներին հայտնաբերելու նպատակով՝ 2018թ. հունվարի 12-25-ը շրջանի հանրակրթական դպրոցներում մեկնարկեց դպրոցականների առարկայական օլիմպիադայի ներդպրոցական փուլը, որի արդյունքներով՝ հունվարի 30-ից մինչև փետրվարի 16-ն անցկացված շրջանային փուլին ունեցանք շրջանի 14 դպրոցների /նախորդ տարվա 13-ի փոխարեն/ 108 մասնակից /նախորդ տարվա 75-ի փոխարեն/: Նրանցից 16-ը /նախորդ տարվա 12-ի փոխարեն/ իրավունք ստացան մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին, սակայն, պակաս, այս տարի, ի տարբերություն նախորդ տարվա, մեր աշակերտները վերադարձան ձեռնունայն: Սա, անշուշտ, մտահոգվելու տեղիք է տալիս, քանի որ օլիմպիադաներին մասնակցած երեխաներն սպասված արդյունքները չեն ցուցաբերում, այս հարցում պետք է ավելի լուրջ մտոնեցում ցուցաբերել և ձգտել անել էլ ավելին՝ ուսումնական գործընթացը բարձր մակարդակի հասցնելու համար:

Ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու, ուսուցման արդի մեթոդներին ծանոթացնելու և ուսուցիչների կրթական մակարդակը կատարելագործելու նպատակով ԿԳՍ նախարարության կողմից պարբերաբար կազմակերպվում են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցում են նաև մեր շրջանի մասնավորաբար: Այս տարվա մարտի 26-ից ապրիլի 4-ը 38 ուսուցիչ մասնակցել է Ստեփանակերտում կազմակերպված վերապատ-

րաստման դասընթացներին՝ տարբեր առարկաների գծով: 2012-ից մինչև 2017-ը մեր շրջանից վերապատրաստվել և ասեստավորվել է 172 ուսուցիչ:

ԿԳՍ նախարարության կրթության պետական տեսչության կողմից համակողմանի ստուգման են ենթարկվել Ջուարի, Եղեգնուտի միջնակարգ, Քնարավանի և Հավասաթղի հիմնական դպրոցները: Եղեգնուտի և Ջուարի միջնակարգ դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը գնահատվել է բավարար, իսկ Քնարավանի և Հավասաթղի հիմնական դպրոցներում՝ վերապահունով բավարար:

Կրթության ոլորտում առաջընթաց ապահովելու, սկսնակ ուսուցիչներին ուսուցման ժամանակակից մեթոդներին ծանոթացնելու նպատակով ԿՍ բաժնի նախաձեռնությամբ դպրոցներում կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, բաց դասեր, մրցույթներ և այլն: Արդեն ավանդույթ է դարձել շրջանի որևէ դպրոցում փնջային կամ շրջանային մակարդակով ընդհանրական դասեր կազմակերպելը, ինչն ուսուցիչների միջև փորձի փոխանակման և սերտ համագործակցության հնարավորություն է ստեղծում: Այս ուսումնական տարում ընդօրինակման դասեր են կազմակերպվել շրջանի Եղեգնուտ, Նոր Էրբեջ և Նոր Բրաջուր համայնքների դպրոցներում: Արդյունքները գոհացնող են եղել, որոշ դեպքերում տրվել են մեթոդական ցուցումներ, կատարվել են կարծիքների փոխանակումներ: Սրան զուգահեռ ստուգումներ ենք իրականացրել շրջանի դպրոցներում: Հայտնաբերված թերությունների շտկման համար տրվել են անհրաժեշտ ցուցումներ: Կատարված ստուգումներից կարող ենք կարծանալ, որ այն դպրոցներում, որտեղ տնօրեններն և ուսուցիչներն կողմից կարևորվել են դասալսումներն ու դրանք պատշաճ ձևով իրականացվել, նկատվում է ուսումնական գործընթացի որակական տեղաշարժ, բայց անելիքներ այս ոլորտում շատ ունենք, քանզի ներկայումս կրթության ոլորտում տեղի ունեցող արագ զարգացումներն սպառնացում են, որ կատարածով չպետք է բավարարվել, այլ պետք է քայլել ժամանակին համընթաց: Հետևաբար բոլոր տնօրեններին վերստին հորդորում ու նրանցից պահանջում ենք՝ հետամուտ լինել իրենց աշխատանքային պարտականությունների ճշգրիտ կատարմանը և ուսուցիչներին հասանելի դարձնել այն պարզ ճանապարհները, որ մանկավարժական նորարարությունները դպրոցում օգնում են սովորողներին ուսուցանել ու դաստիարակել ժամանակի ոգով, օգնում աշակերտներին հաղթահարել իրենց հետագա ուսումնառության հետ կապված դժվարությունները: Իսկ ուսուցիչը պետք է լինի ժամանակակից նորամուտությունների կրողը, քայլի ժամանակին համընթաց և անընդհատ գտնվի որոնումների մեջ:

Անդրադառնալով դասալսումների մատյանների ստուգմանը՝ կարող ենք ասել, որ տարեցտարի առաջընթաց է նկատվում որակական և քանակական առումներով, մասնավորապես շրջանի դպրոցների 33 ղեկավար աշխատողներից 22-ի կատարած դասալսումների որակը գնահատվել է լավ, 11-ը՝ բավարար (նախորդ տարի՝ 32-ից 22-ը՝ լավ, 10-ը՝ բավարար), սակայն մտահոգիչ է այն, որ որոշ դեպքերում անցյալ տարի լավ գնահատվածներից ոմանք այս տարի, կարծես թե, մատների արանքով են մայել իրենց աշխատանքին և գնահատվել են բավարար:

ԿԳՍ նախարարության գնահատման և թեստավորման կենտրոնից ստացած 9-րդ և 12-րդ դասարանների քննությունների անցկացման համար անհրաժեշտ արժանագրությունների և այլ փաստաթղթեր ժամանակին տրամադրել ենք շրջանի դպրոցներին: Դպրոցների և ԿՍ բաժնի կողմից կատարվել են բոլոր նախապատրաստական աշխատանքները՝ կապված քննական կենտրոնների ձևավորման, քննության ընթացքի կազմա-

կերպիչների նշանակման և այլնի հետ: Քննությունների առաջին փուլն անց է կացվել հունիսի 2-28-ը: Լրացուցիչ քննություններն անց են կացվել հուլիսի 4-7-ն ընկած ժամանակահատվածում՝ ըստ սահմանած ժամանակացույցի:

Շրջանում ունենք 9-րդ դասարանն ավարտած 57 աշակերտ, իսկ 12-րդ դասարանն ավարտած՝ 28:

12-րդ դասարանի 12 շրջանավարտը բուհ ընդունվելու նպատակով հայտ է ներկայացրել միասնական քննություններին մասնակցելու համար: Նրանցից 3-ը հետագայում մտափոխվել և չի մասնակցել միասնական քննություններին, 7-ը հաջողությամբ հանձնել է քննությունները և ընդունվել տարբեր բուհեր, շրջանավարտներից մի քանիսն էլ հավակնել են իրենց կրթությունը շարունակել հեռակա ուսուցմամբ:

Անդրադառնալով 2017-2018 ուստարում աշակերտների ցուցաբերած առաջադիմությանը՝ նշենք, որ տարեվերջյան հաշվետվությանը (մինչև քննությունները) շրջանում ունենք 710 աշակերտներ, որից 66-ը՝ 1-ին դասարանն ավարտածներ, մնացած 644-ից՝ ունենք 81 գերազանց սովորող աշակերտ, 1 չգնահատված աշակերտ, 167-ը՝ լավ, իսկ 391-ը միջակ կարողությունների տեր են: Ընդհանուր առմամբ ուսման առաջադիմությունն ամբողջ շրջանում կազմում է 99,4 տոկոս, որակը՝ 38,6, գերազանցիկներ՝ 12,6: Սակայն քննությունների արդյունքները ցույց տվեցին, հատկապես մաթեմատիկայի 9-րդ դասարանի քննության, որ դպրոցներում կատարվում են գնահատականների անհարկի և ահռելի ուռճացումներ: Կատարված ստուգումներից ելնելով՝ բոլոր տնօրեններին հանձնարարվել է վերահսկողությունն ավելի ուժեղացնել դպրոցներում աշակերտների գիտելիքները ճիշտ գնահատելու և պահանջվել լինել օբյեկտիվ, քանզի մեր երեխաների ապագայի համար այսօր մենք ենք պատասխանատու: Վստահաբար կարող ենք ասել, որ քաղաքակիրթ դպրոցն ուսուցիչների, ծնողների, հասարակության, դպրոցականների վստահելի միություն է, որն ունի ստեղծագործական շփումների և համատեղ գործունեության անհրաժեշտություն: Դրա համար անհրաժեշտ է հող նախապատրաստել աշակերտ-ծնող-ուսուցիչ սոցիալական ուժերի ամուր միության, համագործակցության համար՝ համուն հայրենամակեր գործի՝ սերունդների կրթության և դաստիարակության: Ուշադրության կենտրոնում պահեք նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին, քանզի մեծ թվով բացակայություններ և ոչ բավարար գիտելիքներ ունեն հիմնականում նշված երեխաները: Անհրաժեշտության համար դեպքում պետք է բացատրական աշխատանքներ տանել նաև այնպիսի ծնողների շրջանում, ովքեր հետևողական չեն իրենց երեխաների ուսման հանդեպ:

Խոսքս եզրափակելով՝ ամենալավն ու բարին են մաղթում բոլորին: Նախ թող խաղաղություն հաստատվի Արցախում, և հաջողություն ուղեկից լինի բոլորիս կյանքում ու աշխատանքում: Թող այսուհետ Արցախում հուշ դառնա պատերազմը, և արցախցին այգաբացն ու մայրամուտը դիմավորի ժպիտով, իսկ հայ մանկավարժն իր սաներին սովորեցնի, թե ինչպես շենացի երկիր, ինչպես նվաճի գիտության գարնանահրաշ աշխարհի բարձունքները և բեղմնավոր աշխատանք ծավալի հանուն մեր պետության հզորացման ու բարգավաճման, որի համար պետք է բոլորս ջանք ու եռանդ չխնայենք:

Միտելի՛ մանկավարժներ, արժանապատվությամբ կրեք ուսուցչի փառավոր անունը, պատասխանատվությամբ վերաբերվեք ձեր գործին, մանկավարժի բարի անունն ու համբավը վեր պահելու համար ձեր պահվածքով ու վարքագծով օրինակ հանդիսացեք հասարակության համար:

ԳԵՂԱԴԻՏԱԿ

«Յուրաքանչյուր իր ժամանակը կգա»

Երեւոյնի 9-ին Շուշի Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի «Հագուստի մոդելավորում» բաժնի ուսանողներն առաջին անգամ ներկայացրել են իրենց կարած հագուստները:

Միջոցառմանը քոլեջի տնօրեն Զիվան Հայրապետյանն ասել է, որ ուսանողներն իրենց առաջին քայլն են կատարել սեփական ոճ ստեղծելու բնագավառում:

«Ցուցահանդեսը կրում է «Ձարդանախշ և նորաձևություն» խորագիրը: Կարծում են՝ հաշվի առնելով, որ նրանց մոդելավորած հագուստները ներկայացվում են առաջին անգամ, չպետք է խիստ դատել: Սա ուսանողների գրանցած առաջին հաջողությունը կարելի է համարել», - նշել է Զ. Հայրապետյանը:

Իր հերթին բաժնի դասախոս Գայանե Մինասյանն ասել է, որ ցուցադրվել են 7 ուսանողների շուրջ 21 կուրսային և դիպլոմային աշխատանքներ:

«Շուրջ մեկ տարի աշխատելով՝ ուսանողներն ընտրել են դասական և

ռոմանտիկ ոճերը, իսկ մեծ մասում, որն իրենից ներկայացնում է առօրյա հագուստ, գերիշխող դերը զարդանախշն է: Բոլոր նյութերը տրամադրվել են քոլեջի կողմից», - ավելացրել է Գ. Մինասյանը:

Երա խոսքով՝ ուսանողներին հնարավորություն է տրվել սեփական

տպավորությունն ստեղծելու համար երկրորդ հնարավորությունը չի ունենում, նրանք փորձել են տպավորություն գործել իրենց անմիջականությամբ ու ընդգծված համեստությամբ», - ասել է Գ. Մինասյանը:

Ուսանողների աշխատանքների առաջին ցուցադրությանը ներկա էր ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը:

Շնորհավորելով երիտասարդ մոդելավորողներին, նա նշել է, որ ընդամենը չորս տարի է, ինչ գործում է հագուստի մոդելավորման բաժինը, և ողջունել է, որ հագուստները կարելիս տեղ է տրվել նաև հայկական զարդանախշերին:

«Մենք տեսանք մոդեռն և ավանդական ոճերի համաձուլվածքը: Կարծում են՝ առաջիկայում ուսանողները գրանցելու են նոր հաջողություններ: Դրա համար պետք է հետևողական աշխատանք, և այս դեպքում, համոզված են, հայրենական արտադրանքը կգնահատվի ըստ արժանվույն», - ասել է Լ. Հովհաննիսյանը:

Արցախյան



երևակայությամբ ստեղծել ինքնատիպ հագուստ:

«Գաղտնիք չէ, որ նորաձև լինելու ձգտումը ողջ կյանքի ընթացքում ուղեկցում է յուրաքանչյուր կնոջ: Առավել հաճելի է, երբ կինն ինքն է ստեղծում իր ուրույն ոճն ու համապատասխան հագուստը: Առաջնորդվելով Կոկո Շանելի այն իմաստալից արտահայտությամբ, որ ոչ ոք առաջին

Նախկին փոխտնօրենի հուշատետրից

«ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԵՄ ՏԿԵԼ...»

Երգիծական մանրապատումներ

Դպրոցում դեռ հերթական օրվա պարապմունքները չէին ավարտվել: Նորանշանակ փոխտնօրեն էի: Սովորականս համաձայն, դանդաղ անցնում էի միջանցքներով: Հանկարծ լսում եմ դասասենյակներից մեկի ներսում, փակ դռների հետևում ոչ բարձրաձայն հնչող արտահայտություններ: Զգուշորեն ու կանաչ դասարանի դուռը, իհարկե, բախելուց հետո բացում եմ ու ներս մտնում: Մի պահ ինձ պաշարում են զարմանք ու զայրույթ: Դասարանում, ախր, ուսուցիչ չկա: Իրար հրմշտող, բարձրաձայն խոսք ու զրույցի մեջ փոխադարձ մտած, «դասը» կատարյալ խառնաշփոթ վերածած միջին դասարանի այդ աշակերտներն ինձ տեսնելով՝ անմիջապես ոտքի կանգնեցին: Բարևում եմ: «Ծանր հանցանքի» մեջ բռնվածների պես բոլորն ակնապիշ հայացքներով կարծես թե զննում են ինձ ոտից գլուխ:

ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով, դեռ իմ առաջին քայլերն էի կատարում...

8-րդ դասարանում, ըստ նախորդ կազմած ու դպրոցի տնօրենի կողմից հաստատված դասացուցակի, գրականության դաս էր: Մտնեմ ու առարկային հատկացված կաբինետը: Կամա թե ականա ունկնդրում եմ դասասենյակից ցածրաձայն դուրս հորդող ձայները (սովորաբար միջանցքում լսվում էր): Ո՛չ մի ձայն ու շշուկ, ոտնաձայն չկա դասարանում: Ուրեմն գրավոր աշխատանք են կատարում՝ անցնում է իմ մտքով: Սակայն կասկած հիրավի տիրակալել է սկսում իմ ներաշխարհում: Դարձյալ էթիկայի պահանջվող կանոնների համաձայն՝ դուռը բախելուց հետո կիսաբաց եմ անում ու նայում ներս: Սակայն դասարանում ո՛չ ուսուցիչ կար, ո՛չ էլ աշակերտներ: Նույն «առաջադրանք» տվող ուսուցիչ «դասն» էր: Գուցե դասը թողել-զմացել է... Բա այդ դեպքում որտե՞ղ են աշակերտները... Գուցե էքսկուրսիա է կազմակերպել...

Տարաբնույթ մտքերը համակել են ինձ: Իջնում եմ դպրոցի բակ, մտնում մերձակա ուսումնափորձնական հողամաս: Դարձյալ ոչ ոք չկար: Դպրոցից 100-150 քայլ հեռավորության վրա դպրոցի մարզահրապարակ է նորակառույց: Շտապում եմ այնտեղ՝ ականջիս հասնող ձայների թելադրանքով: Տղաները և աղջիկները, երկու թիմ կազմած, ֆուտբոլ են խաղում: Ներկայանում եմ նրանց: Տեսնելով ինձ՝ նրանք անմիջապես ընդհատում են խաղը: Գրականության դասին՝ ֆուտբոլ... Սա ի՞նչ նորություն է: Ուսուցիչ էլ չկա...

- Ո՛ր է ընկեր Մարկոսյանը, ֆուտբոլասեր սաներ, - հարցնում եմ նրանց:

- Ներքևում՝ Չորաբլուրի մոտ, քեֆ են անում, գնաց մասնակցելու: Մեզ հանձնարարեց խաղադաշտում խաղալ, - ասաց աղջիկներից մեկը:

Ինձ սկսել էր հետաքրքրել ընկեր Մարկոսյանի էությունը, բնավորությունը ճանաչելու տենչը: Ի՞նչ անել: Մտորում էի: Գնա՛լ Չորաբլուրի մոտ: Գուցե ինձ այլ պիտակ կպցնեն: Ասեմ՝ ստամոքսի համար է եկել հերթական որկրամուլը: Մոտեցա անտառի եզրին, բայց չներկայացա: Ինձ մանկուց հոգեհարազատ գյուղական ընկերներ էին: Սակայն խիտ ծառերի թաքստոցից ծիկրակեցի սեղանապետի բաժակածառերը: Պարզ է, ընկեր Մարկոսյանն այնտեղ սեղանապետ է...

Ծանր, հոգեմաշ ապրումներով վերադարձա դպրոց: Մեկ-երկու ժամ անց ուսուցչանոց մտավ ակոհողային խմիչքներից կասկարմիր կտրած Մարկոսյանը:

Չնայած ներքին մի ձայն ստիպում էր ինձ լռել, բայց չկարողացա: Ձահել էի, չկարողացա ինձ ինքնատիրապետել ու պայթեցի:

- Ընկեր Մարկոսյան, ինչո՞ւ առանց մեզ տեղեկացնելու դասի բնույթը փոխել եք՝ գրականությունը դարձնելով ֆիզկուլտուրա, այն էլ թողել առանց ուսուցչի վերահսկողության:

- Պարզ երևում է, որ դու դեռևս ոչ հասուն կոփված, փորձ չունեցող փոխտնօրեն ես... Ֆիզիկական դաստիարակությունն ամենակարևոր դպրոցն է, - կիսախայթող տոնով ինձ փորձեց կամօրել իրոք մեր պարտիզան, իմ համեմատությամբ՝ ավագ ու «փորձառու» գործընկերը...

Իսկ ես մտովի արտաբերեցի. «Այդ էլ ձեր հերթական բաժակածա՛ռն է...»:

Այս անգամ էլ ընկեր Մարկոսյանին հանդիպեցի դպրոցի գրադարանում՝ ընթերցասրահում: Դասացուցակով նա պիտի դասի լիներ...

- Ընկեր Մարկոսյան, բա Դուք դասի չե՞ք, - հարցրի նրան:

- Դասի եմ, աշակերտներիս գրավոր առաջադրանք են հանձնարարել: Իսկ ես զբաղվում եմ ինքնակրթությամբ... Չե՞ որ դա պետական պահանջ է՝ ուղղված ուսուցիչներին: Ինչպե՞ս վարվել՝ մտմտում էի ես... Հայտնե՞լ տնօրենին, թե՞ ոչ ոք սպասել:

վում եմ ինքնակրթությամբ... Չե՞ որ դա պետական պահանջ է՝ ուղղված ուսուցիչներին: Ինչպե՞ս վարվել՝ մտմտում էի ես... Հայտնե՞լ տնօրենին, թե՞ ոչ ոք սպասել:

Դպրոցում վերջին դասաժամ էր, պարապմունքներ էին ընթանում: Շտապում էր դեպի տուն՝ կարճատև «ընդմիջման» համար (նրա տունը համարյա դպրոցամերձ է):

- Ընկեր Մարկոսյան, դասացուցակով Դուք դեռ ֆակուլտետով պարապմունք ունեք, - հիշեցրի նրան:

- Գիտեմ, պարոն փոխտնօրեն: Այսօր հնարավորություն չունեմ պարապելու: Հետագայում լրացուցիչ կպարապեմ: Կարող եք բոլորովին չաճեցնե՞լ ինձ... - դարձյալ նույն՝ աշխատանքից խուսափելու նպատակամղումով ինձ սկսեց «հանոզել» ընկեր Մարկոսյանը՝ միաժամանակ բռնելով տուն տանող ճանապարհը:

Մինչև ե՞րբ: Արդարանում է, որ «տնային առաջադրանքներ է տվել»...

Ուսուցչանոցում, դասը թողած, մի սկսեցի ուսուցչի հետ շախմատ էր խաղում:

- Ընկեր Մարկոսյան, դաս ունեք, - ստիպված հիշեցրի նրան:

- Գիտեմ: Մեթոդական նոր սկզբունքով եմ առաջնորդվում՝ դասը վարում եմ աշակերտները: Կարող եք ընդօրինակել... - դարձյալ գրոհեց մեր պարտիզան ընկեր Մարկոսյանը, միաժամանակ ինձ՝ համեմատաբար երիտասարդ ուսուցչի հաղորդելով «նորարարի» իր փորձն ու գյուտը:

Թովիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Թռչանառու մանկավարժ
Ք. Ճարտար

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Մտեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info

Մեքերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Մտեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 12.11.2018թ.: